

ՏԵՂԵԿԱԳԻՐ**ՏԵՂԵԿԱԳԻՐ****ԿԻՒԼՊԵՆԿԵԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ 2024 ՏԱՐԻՈՅ**

Ամենապատիւ Տ. Նուրհան Արք. Մանուկեան

Հայ Պատրիարք Երուսաղէմի եւ նախագահ Տնօրէն Ժողովի

Երուսաղէմ, Սուրբ Աթոռ

Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հայր,

Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան Կիւլպէնկեան Մատենադարանը 2024 տարւոյ ընթացքին յաջողութեամբ իրականացուց իր առաքելութիւնը: Շարունակուեցան համագործակցութիւնները Հայաստանի Ազգային գրադարանի եւ Հայաստանի Հանրապետութեան Գիտութիւններու Ազգային Ակադեմիայի հիմնարար գիտական գրադարանի հետ:

Ձերդ Ամենապատուութեան օրհնութեամբ եւ արտօնութեամբ Մարտ 18-ին Հայաստանէն ժամանեց Օրիորդ Աննա Բարսեղեան եւ աշխատանքի անցաւ Մատենադարանէս ներս որպէս Հաւաքածոներու եւ գրացուցակներու համակարգող եւ վերականգնող: Մարտ 20-էն սկսելով իր աշխատանքը ան նախ տարիներու փոշիէն ամբողջութեամբ մաքրեց թերթերու պահոցի ամսաթերթերը, շաբաթաթերթերն ու օրաթերթերը, ապա՝ ամբողջ դարակները: Մաքրութենէ յետոյ այդ բոլոր թերթերը այբբենական կարգով դասաւորեց դարակներու վրայ, դարակներու ներսէն փակցուց թերթերու անուանումները, իսկ շաբթերու կողքէն՝ տառերը:

Կիւլպէնկեան Մատենադարանիս մէջ հաստատուծ ձեռագիրներու առժամեայ պահոցին մէջ բռնկած հրդեհին հետեւանքով ամբողջութեամբ սեւցած է ձեռագիրներու պահոցը, նաեւ այդ պահոցէն ծուխը թերթերու պահոց լեցուած էր եւ մաքրութիւնը զերոյացուցած: Ձեռագրաց առժամեայ պահոցէն Հ. Արշակ Տիրացուներու հետ միասին մաքրեցին ձեռագիրներու վրայ նստած մուրը եւ փոխադրեցին նոր Ձեռագրատուն, իսկ թերթերու պահոցի մաքրութիւնը եւ թերթերու վրայ նստած մուրը դարձեալ մաքրեց Օրիորդ Աննա Բարսեղեան:

Մուրերու մաքրման աշխատանքներէն յետոյ, Օրիորդ Աննա Բարսեղեան այժմ մի առ մի կը հաշուառէ օրաթերթերը ըստ հրատարակութեան օրերու, կ'արձանագրէ առկայ եւ բացակայ թիւերը, որպէսզի ունենանք թերթերու պահոցի վերջնական ցուցակ, ապա կը դասաւորէ դարակներու վրայ:

2024 թուականի Յունուար 1-էն առ 25 Դեկտեմբեր, Կիւլպէնկեան Մատենադարանը համալրուած է 500 միաւոր գրականութեամբ, որոնցմէ գիրք՝ 310 միաւոր, ամսագիր եւ օրաթերթ՝ 186 միաւոր, հնատիպ՝ 4 միաւոր:

Տարուայ ընթացքին բոլոր նուիրատուներու անունները կանոնաւոր կերպով արձանագրուած են «Սիրոն» ամսագրին մէջ:

2024 տարւոյ ընթացքին առ 17.12.2024 Մատենադարանիս գրադարանավարուհի Տիկին Աննա Կէճէքուշեան ելեկտրոնային շտեմարան մուտքագրած եւ գծակոդաւորած (barcode) է 2517 միաւոր հնատիպ գրքեր: Գծակոդաւորած (barcode) եւ քարտաւորած է 1245 միաւոր հայերէն եւ 88 միաւոր օտարալեզու գիրքեր:

2024 տարւոյ ընթացքին օժանդակութեամբ Գալուստ Կիւլպէնկեան հիմնարկութեան Հայկական համայնքներու բաժանմունքի եւ Լոնտոնի Սուրբ Սարգիս բարեգործական հիմնադրամի, ինչպէս նաեւ Սուրբ Աթոռոյս՝ փոխուեցան Կիւլպէնկեան Մատենադարանի ընթերցասրահի, մեծ սրահի եւ թերթերու պահոցի ներկառուցուած օգորակիչները, նոր օգորակիչ մըն ալ զետեղուեցաւ հնատիպ գիրքերու պահոցին մէջ:

Նորոգուեցան տանիքի անձրեւաջուրներու խողովակները եւ փոխարինուեցան նոր՝ պղնձեայ խողովակներով: Ձեռք բերուեցաւ մինչեւ ԱՅ չափի գրքեր թուայնացնելու մէկ մեքենայ, ինչպէս նաեւ պատճէնահանող մէկ մեքենայ:

Ներկայիս անհրաժեշտ է վերանորոգել ձեռագիրներու հրդեհուած առժամեայ պահոցը: Փոխել Մատենադարանիս բոլոր հրդեհավտանգ լոյսերը, ձեռք բերել դասախօսութիւններու, միջոցառումներու համար անհրաժեշտ ամպիոն մը, Projector, Projector Screen եւ laptop համակարգիչ:

Կիւլպէնկեան Մատենադարանիս աշխատակիցներ՝ Գրադարանավարուհի Տիկին Աննա Կէճէքուշեան, Հաւաքածոներու եւ գրացուցակներու համակարգող եւ վերականգնող՝ Օրիորդ Աննա Բարսեղեան եւ մաքրութեան պատասխանատու Տիկին Լարիսա Սարգսեան իրենց աշխատանքը կատարած են սրտացաւօրէն, որու համար շնորհակալ ենք:

Շնորհակալ ենք Ձերդ Ամենապատուութեան իր հայրական վերաբերմունքի համար:

Ձերդ Ամենապատուութեան կը մաղթենք արեւշատ եւ քաջառողջ բազում տարիներու գահակալութիւն:

ՆԵՐՍԵՏ ՎԱՐԴԱՊԵՏ ԱԼՈՅԵԱՆ

Տեսուչ Կիւլպէնկեան Մատենադարանի

Ս. ԱԹՈՌՈՅՍ ԿԻՒԼՊԵՆԿԵԱՆ ՄԱՏԵՆԱԳԱՐԱՆԸ ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՅԱԾ Է ՀԵՏԵՒԵԱԼ ԳԻՐՔԵՐԸ

1. Մատենադարանիս տեսուչ՝ Տ. Ներսէս Վրդ. Ալոյեան կը նուիրէ՝ 11 գիրք, 2 զրրքոյկ եւ 2 ամսաթերթ:

- Համաստեղ - Աղօթարան, Երեւան, 2017:

- Շարականք հանգստեան, Օրհնութիւնք ապաշխարութեան, Մեծացուցէք, Շարականք խաչի եւ Համբարձիք եւայլն, Երուսաղէմ, 1947:

- Կանոնադրութիւն Ընդհանուր Ժողովոյ Միաբանական Ուխտին Սրբոց Յակովբեանց Երուսաղէմ, Երուսաղէմ 1881 (պատճէն):

- Ռ. Ա. Աթայեան, Տ. Գ. Տէր-Մարտիրոսեան - Երաժշտութեան տարրական տեսութիւն: Դասագիրք երաժշտական ուսումնարանների համար, Երեւան, 1949 (պատճէն):